



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

29 հուլիսի 2021թ.

ք. Երևան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 3

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՐԱՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 12-րդ մասի 4-րդ կետով, 48-րդ հոդվածի 8-րդ մասով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցույթի հարցազրույցի փուլի հարցարանը՝ համաձայն Հավելվածի:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

**Համլետ Ասատրյան (Նախագահ)
Գևորգ Բաղդասարյան
Դանիել Իրաննիսյան
Հայկ Մարտիրոսյան
Մարիամ Գալստյան (քարտուղար)**

Հավելված

**Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի
թեկնածուների ընտրության
մրցութային խորհրդի
2021 թվականի հուլիսի 29-ի
թիվ 3 որոշման**

ՀԱՐՑԱՐԱՆ

**ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԻ**

1. Քրեական օրենքի և քրեական դատավարական օրենքի գործողությունը տարածության մեջ և ժամանակի ընթացքում.
2. Ավարտված և չավարտված հանցագործությունները.
3. Հանցակցությունը.
4. Քրեական պատասխանատվությունից ազատելը.
5. Գույքի բռնագանձման և բռնագրավման ինստիտուտների առանձնահատկությունները .
6. Կոռուպցիոն հանցագործությունների ընդհանուր բնութագիրը.
7. Ընտրողներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրակաշառքի միջնորդությունը. ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը.
8. Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
9. Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացում).
10. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը և պաշտոնեական լիազորություններն անցնելը.
11. Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը.
12. Ապօրինի հարստանալը.
13. Կաշառք ստանալը, կաշառք տալը, կաշառքի միջնորդությունը.
14. Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելը.
15. Հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելը, հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը.
16. Արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
17. «Քրեական հետապնդում» և «մեղադրանք» հասկացությունները.
18. Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները.
19. Քրեական դատավարության սուբյեկտները.
20. Ապացույցներ և ապացուցում"
21. Դատավարական հարկադրանքի միջոցները.
22. Օպերատիվ-հետախուզական գործունեությունը.
23. Կաշառքի պրովոկացիա, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում, առաքինության ստուգում.
24. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները՝ որպես ապացույց.

25. Համագործակցության և համաձայնեցման վարույթները և դրանց առանձնահատկությունները.
26. Քրեական գործի հարուցումը մերժելու, գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների բողոքարկումը.
27. Դատախազական հսկողության և դատական վերահսկողության առանձնահատկությունները, դրանց սահմանազատումը.
28. Կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկա.
29. Միջազգային իրավական փոխօգնություն.
30. Իրավաբանական անձի տեսակները, վերակազմակերպումը և լուծարումը, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը.
31. Պաշտոնատար անձի կողմից պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունները.
32. Պետական և համայնքային կառավարչական հիմնարկների, ոչ առևտրային կազմակերպությունների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները.
33. Գործարքի հասկացությունը, գործարքի տեսակները և ձևը, գործարքի վավերության պայմանները.
34. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը.
35. Իրավական կոլիզիաների և իրավունքի բացերի հասկացությունը, պատճառները, լուծման կառուցակարգերը: